ՔԱՂՎԱԾՔ
Գործ թիվ ԵԴ2/1035/02/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

2025թվականի սեպտեմբերի 09-ին Երևան քաղաքում

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎՈՐ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ Ա.ՏԻՏԻՋՅԱՆԻ

Դոնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Խաչ-Արմ» ՍՊ ընկերության /պետական գրանցման համար՝ 269.110.1200901/ և «Էլլ-Գա-Ման» ՍՊ ընկերության /պետական գրանցման համար՝ 52.110.01641/ ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության /հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5/՝ թիվ ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66-635-22 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին.

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել:

Անվավեր ճանաչել թիվ ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2023 թվականի մարտի 20-ի ծանուցմամբ նշված թիվ ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66-635-22 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից հօգուտ «Խաչ-Արմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Էլլ-Գա-Ման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 130,000 ՀՀ դրամ, որից 100,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, 30,000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 26.04.2023 թվականի թիվ ԵԴ2/1035/02/23 հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշման և 28.04.2023 թվականի թիվ ԵԴ2/1035/02/23 կատարողական թերթերով կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև սույն վճռի կատարումը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Digitally signed by NAIRA AVETISYAN